ՓԱՌՔ ՄԵԾԱԾ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ՝ ՆՐԱ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՀԱՐԳ
ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ

Մոսկվա

Ամբողջ հայ ժողովուրդը թե՛ մեր սովետական մայր հայրենիքում և թե՛ արտասահմանում, այս օրերս հպարտ են ու ցնծության մեջ, որ Ձեր ծննդյան ութսունամյակի առթիվ Դուք մի անգամ ևս արժանացաք սովետական պետության ամենաբարձր պարգևատրումներին:

Արդար հպարտությամբ հայ ժողովուրդը երբեք չի մոռանալու, որ հայրենական մեծ պատերազմի օրերին Դուք կրակի առաջին գծերի վրա չորս տարիներ շարունակ Ձեր ընդհանուր հրամանատարության ներքև գտնվող բանակները առաջնորդեցիք հաղթանակից հաղթանակ և սովետական եղբայր ժողովուրդների հերոսների շարքում, Դուք ևս Ձեր անունը պսակեցիք հերոսի փառքով, իբրև հարազատ զավակը քաջարի հայ ազգի:

Ձեր լուսաշող անունը, զորավար Անդրանիկի նման երախտագիտությամբ պիտի հիշվի դարեդար իբրև հայրենասիրության գերագույն օրինակ:

Սուրբ Էջմիածնից սրտանց ողջունում ենք Ձեր ութսուն տարիների պանծալի կյանքը ու փառավոր վաստակը և մաղթում, որ դեռևս երկար, անհատնում օրեր ապրեք քաջառողջ՝ վայելելու համար սովետական ժողովուրդների և հայ ազգի մեր օրերի հաղթական վերելքն ու ծաղկումը խաղաղության և ապահովության պայմաններում, որի համար Դուք ևս ընծայաբերեցիք Ձեր ամբողջ կյանքն ու տաղանդը անմնացորդ նվիրումով:

Դուք միշտ պիտի ապրեք անմոռաց ու պայծառ:

Ձեզ, մեծանուն Մարշալ, Մեր սերը, Մեր հարգանքը, Մեր հիացմունքը և Մեր օրհնությունը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 դեկտեմբեր 1977 թ.